

Գևորգ Դանիելյան

Սահմանադրական դատարանի խորհրդական,
«Սահմանադրական իրավունքի կենտրոն» խորհրդի նախագահ,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ՃԱՆԱԶՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԱՐԴԻ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ

Ի տարբերություն ցեղասպանության ցանկացած այլ փաստի, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում դատական ակտերի վրա շեշտադրում չանելը, դրանք որպես հիմնական փաստարկներ շրջանառության մեջ չդնելը, որքան էլ որ դա ոչ իրավաչափ ու անհեռանկար լինի, այնուամենայնիվ, դեռևս պահպանում է իր կենսունակությունը և անհարկի խոցելի դարձնում հիշյալ գործընթացի արդյունավետությունը: Խոսքը, առաջին հերթին, հենց *թուրքական ազգային դատարանների կողմից 1919-1920թթ. կայացած այն դատավճիռների մասին է, որոնցով «Իթթիհատ»-ը՝ երիտթուրքերի ղեկավար կուսակցությունը, թուրք բարձրաստիճան զինվորականները, պետական ու կուսակցական գործիչներն ու այլ պաշտոնյաներ դատապարտվել են էթնիկ հակտանիշով պայմանավորված անձանց զանգվածային սպանո՞վ կազմակերպելու ու իրականացնելու, ինչպես նաև բռնի տեղահանումների համար:*

Այս դատական ակտերին մենք դեռ կանդրադառնանք ստորև, սակայն, նախ, փորձենք պարզել, թե ինչո՞ւ, ի՞նչ նկատառումներով է թելադրված վերոհիշյալ դիրքորոշումը, մասնավորապես, ինչո՞ւ տարաբնույթ ու հավաստի բազմաթիվ պատմական փաստերի կողքին չեն հայտնվում նաև առավել արժեքավոր ու իրավական մեծարժեք դատական ակտերը: Շատերը հավկած են սոսկ այն տեսակետին, թե այդ հարցի հիմքում ընկած է բացառապես հոգեբանական գործոն, ըստ որի տևական ժամանակով իրականացվող հենց Թուրքիայի ժխտողական քաղաքականության համատեքստում ձևավորվել է համոզմունք, համաձայն որի, անիմաստ է կեղծիքները, որպես քաղաքականության անդավաճան լծակ ճանաչող թուրքական կողմից սպասել արդարության, այդ թվում՝ արդարադատության որևէ դրսևորում¹:

¹ Տե՛ս David B. MacDonald. Identity Politics in the Age of Genocide. The Holocaust and historical representation. Routledge, 2008, էջ 31-39:

Վերոհիշյալ հոգեբանական գործոնի առնչությամբ մենք ևս բացասական կարծիք չունենք, սակայն չենք կարող նաև չնկատել, որ դրան անհարկի անհամարժեք նշանակություն է վերապահվել: Չպետք է անտեսել նաև այնպիսի փաստարկներ, ինչպիսիք են ոչ բավարար իրազեկվածությունը, նշված դատական ակտերի իրավական արժեքի մասին անհամարժեք գնահատականները և, վերջապես՝ իներցիոն մտածելակերպը, որը հաճախ հանգեցնում է կարծրատիպերի ձևավորմանը: Այս խոչընդոտները հաղթահարելը, թերևս, հնարավորություն կտար ընկալելու, որ թուրքական դատարանների կողմից ժամանակին զանգվածային բնաջնջումները դատապարտող ակտեր կայացնելը բնավ թելադրված չի եղել արդարադատության մարմանցով, որ դրանք հիմնականում թելադրված են եղել տվյալ երկրի միջազգային ու ներազգային մի շարք այնպիսի ազդակներով (սրանց ևս կանդրադառնանք ստորև), որոնք պատմական տվյալ ժամանակաշրջանում հնարավոր են դարձրել այդպիսի գործընթացները¹:

Այն, որ այդ ազդակները սոսկ պատմական տվյալ իրավիճակով են թելադրված եղել և բնավ չեն բնութագրում թուրքական քաղաքականության էությունը, ապացուցվում է թեկուզ այն փաստով, որ արդեն 1923թ. մարտի 31-ին, այսինքն՝ դատավարություններից ընդամենը երկու տարի անց, թուրքիայում հայտարարվեց համաներում, որի արդյունքում ազատության մեջ հայտնվեցին բոլոր այն ոճրագործները, որոնք դատապարտվել էին թուրքիայի զինվորական դատարանի և ընդհանուր իրավասության մյուս դատարանների կողմից²: Ընդ որում, թուրքական դիվանագիտությունը ևս ամեն ինչ արել է, որպեսզի հիշյալ դատական գործընթացները չհայտնվեն քաղաքական բանավեժերի տեսադաշտում, չդառնան քննարկման նյութ, հնարավորինս հայտնի չլինի լայն շրջանակներին, ինչը տևական ժամանակով նրանց հաջողվել է: Սակայն, երբ դրանք անխուսափելիորեն դարձան հրապարակային քննարկման նյութ, գործի դրվեցին դրանց իրավական հիմնավորվածությունը և հավաստիությունը կասկածի տակ դնելու և կոչված արդեն նոր փաստարկներ:

¹ Ст'ю Барсегов Ю.Г. Геноцид армян – преступление по международному праву. – XX1 Век – Согласие, 2000, էջ 111-112:

² Ст'ю Dadrian V.N. Genocide as a problem of National and International Law: the Wold War I Armenian case, its contemporary legal ramifications // Yale Journal of International Law. Vol. 14, № 2. (Summer 1989). էջ 313-314:

Նախապես նկատենք, որ մենք բնավ հակված չենք նշված դատական ակտերը բնորոշելու, որպես ոչ միայն միջազգային չափանիշներին, այլև ազգային (տվյալ դեպքում՝ թուրքական) իրավունքին խստորեն համահունչ արդարադատության իրականացման նմուշներ: Ինչ խոսք, դրանք հեռու են այդպիսին համարվելուց, սակայն բնորոշն այն է, որ թուրքական քաղաքականությունը կառուցված է անգամ այդ կարգի դատական ակտերում արձանագրված փաստերն ամբողջովին ժխտելու ձգտումների վրա: Պարզվում է, շուրջ 100 տարի անց, թուրքական գործիչներն ու իրենց գիտնական հորջորջողները կասկածի տակ են առնում իրենց իսկ ազգային դատական ատյանների դատավճիռները:

Ցեղասպանության յուրաքանչյուր փաստի արձանագրման, ընդհանրապես որևէ արարք հանցագործություն որակելու համար անվերապահորեն անհրաժեշտ է մեղադրական դատական ակտ: Սա անվիճելի սկզբունք է, որն իր ամրագրումը ստացել է բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթերում և ճանաչվել՝ ազգային իրավական համակարգերով: Ընդ որում, այս տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունեն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված դրույթները, որոնք խնդիրը կարգավորման նյութ են դարձրել մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից¹:

Ընդհանրապես, միջազգային իրավունքի փաստաթղթերը, անդրադառնալով այս խնդրին, հարցը քնարկման առարկա են դարձնում հիմնականում մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից. տվյալ դեպքում շեշտադրվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում հենց այս հանգամանքն է շեղել Հայոց Եղեռնի միջազգային ճանաչման գործընթացների հունը՝ «հարմարվելով» այն բացառապես, որպես պատմական փաստաթղթերի հիման վրա քաղաքական հարթության վրա քննարկելու ու ճանաչելու գաղափարախոսության մեջ:

Ընդ որում, քանի դեռ, Հայոց Եղեռնի ճանաչման գործընթացը սահմանափակվում էր սոսկ այս կամ այն եկրի օրենսդիր մարմնի կողմից որևէ իրավական եղանակով ու ձևով ճանաչելով կամ քաղա-

¹ Տե՛ս Оганесян В.А., Принципы уголовного правосудия в международном праве. Эволюция и особенности имплементации / В.А. Оганесян. – NOTA BENE, 2011, էջ 85:

քական նշանակությամբ դատապարտելով, դրանց որևէ իրավական նշանակություն չէր տրվում, դրանք չէին դառնում իրավական հետևանք առաջացնող փաստաթղթեր: Առավելագույնը տվյալ դեպքում այն է, որ այս կամ այն կերպ դրանք նվազեցնում են Թուրքիայի միջազգային վարկը և անուղղակիորեն առաջացնում այդ երկրի կողմից Հայոց Եղեռնը ևս ընդունելու ոչ միանշանակ պարտավորություն: Ինչ խոսք, անգամ այս զարգացումները չէին կարող անտարբեր թողնել թուրքական կողմին, որը հետևողական ու միջոցների մեջ որևէ ընտրություն չհամդուրժող գործելաոճով մշտապես ձգտել է ժխտել Հայոց Եղեռնը:

Սակայն, երբ Հոլոքստի առնչությամբ որոշ Եվրոպական երկրների կողմից այն ժխտելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու գործընթացն իր արձագանքն ունեցավ նաև Հայոց Ցեղասպանության համատեքստում, անմիջապես փոխվեց ոչ միայն քաղաքական բանավեճերի հարթակը, այլև բուն փաստարկների իրավական արժեքը: Անմիջապես պարզ դարձավ, որ «դասական եղանակներով» Հայոց Եղեռնի ճանաչման, առավել ևս այն ժխտելու կամ դրա նշանակությունը մեղմելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու հեռանկարը խիստ խոցելի է:

Նման դեպքերում, ինչպես ասում են՝ չկա չարիք, առանց բարիքի, վերջապես հայրենական դիվանագիտությունը հարկադրված կլինի լքջորեն անդրադառնալ Հայոց Եղեռնը նաև դատական համապատասխան ակտերով հիմնավորելու խնդրին և չի բավարարվի սոսկ պատմական փաստերի լուսաբանմամբ:

Ի դեպ, կարծում ենք, Թուրքիային հաջողվել է ոչ միայն տևական ժամանակով խիստ կարևոր քննարկումներում տեսադաշտից հեռու պահել հիշյալ դատական գործընթացները, այլև՝ պարտադրելու խնդրի հետազոտման ու քննարկման իր կանոնները, որոնք մի կողմից բարենպաստ են թուրքական քաղաքականության տեսանկյունից, մյուս կողմից՝ ձևավորում են խնդրի քննարկման այնպիսի ավանդույթներ, որոնք այն ուղղորդում են փակուղի, հնարավորություն չեն տալիս արմատապես վերանայելու ձախողված կարծրատիպերը:

Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդն իր 2012թ. փետրվարի 28-ի որոշմամբ գտել է, որ ցեղասպանությունների ժխտման համար քրեական պատասխանատվության սահմանումը հակասահմանադրական ոտնձգություն է խոսքի ու արտահայտվելու ազատության նկատմամբ: Այդ որոշումն ընդամենը վեց կետից բաղկա-

ցած 2 էջանոց փաստաթուղթ է, այն նման չէ հայրենական սահմանադրական արդարադատության պրակտիկային, երբ նախապատվությունը տրվում է փաստերի ու հիմնավորումների հանգամանալից շարադրանքին: Դրա հինգ կետերը սոսկ գործի հանգամանքների նկարագրությունն են, և միայն 6-րդ կետում, առանց համարժեք վերլուծության և հիմնավոր իրավական դիրքորոշումների, ներկայացված է խորհրդի վերոհիշյալ եզրահանգումը: Ընդ որում, որպես հիմք է ընդունվել այն, որ խորհրդարանի կողմից նորմատիվային նշանակության օրենք ընդունելը ոչ իրավաչափորեն սահմանափակել է խոսքի ու արտահայտվելու ազատությունը:

Թերևս, անդրադառնանք քննարկման նյութի՝ սահմանադրական խորհրդի վերոհիշյալ որոշման բովանդակային կողմին: Նախ, նկատենք, որ սահմանադրական խորհուրդ ներկայացրած դիմումում օրենքի սահմանադրականությունը վիճարկող խորհրդարանականները ներկայացրել են մի շարք փաստարկներ, որոնցից յուրաքանչյուրին առանձին անդրադառնալով ակնհայտ է դառնում զուտ իրավական չափանիշներով դրանց անհիմն լինելը, միակողմանի ու *անհարկի քաղաքականացված բնույթը*, վտանգավոր նախադեպային նշանակությունը, ժողովրդավարական մնայուն արժեքներից նահանջը:

Շեշտելով, որ մտքի և կարծիքի ազատ արտահայտումը մարդու ամենաթանկ իրավունքներից է, այն ամրագրված է Մարդու իրավունքների ու ազատությունների 1789թ. ֆրանսիական հռչակագրի 11-րդ հոդվածում և հանդիսանում է ժողովրդավարության կարևոր պայմանը, միաժամանակ, վերջիններս ընդգծել են, որ ազատության սահմանափակումները պետք է լինեն անհրաժեշտ ու համաչափ հետապնդվող նպատակին, բխեն սահմանադրական արժեքներից, չվնասեն դրանց:

Խնդրի էությունն էլ հենց այն է, որ նշված փաստարկներն անառարկելի են ու ճշմարտացի, ինչն արձանագրվել է սահմանադրական խորհրդի կողմից, սակայն դրանք որևէ աղերս չունեն ընդունված օրենքի հակասահմանադրականության հետ: Դիմումի հեղինակները շրջանցել են մի շարք էական նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնց վրա անհասկանալիորեն «աչք է փակել» նաև արդեն սահմանադրական խորհուրդը:

Մարդու իրավունքների և ազատությունների 1789թ. ֆրանսիական Հռչակագրի նախաբանում միանգամայն դիպուկ ու հստակ ամ-

րագրված է. «... մարդու իրավունքները հաշվի չառնելը, դրանց անտեսումը կամ արհամարհումը միակ պատճառն է հասարակական դժբախտությունների ու կառավարությունների այլասերման»: ՅՈՒՆԿԵՍ-ի 2-րդ հոդվածն արդեն նվիրված է մարդու բնական և անօտարելի իրավունքների երաշխավորվածությանը. «Յուրաքանչյուր քաղաքական միության նպատակը մարդու բնական ու անօտարելի իրավունքների ապահովումն է»: Այսպիսով, երկու դեպքում էլ նկատի է ունեցվում «մարդու բնական ու անօտարելի իրավունքների» ողջ համակարգը, ընդգծվում է դրանց տրամաբանական ներքին կապն ու համալիր բնույթը՝ դրանցից չառանձնացնելով որևէ մեկը և չհակադրելով մյուսներին¹, ինչը փորձել են անել դիմումի հեղինակ խորհրդարանականները:

Սահմանադրական իրավունքում, այդ թվում՝ ֆրանսիական, անվիճելի է համարվում հայեցակարգային այն մոտեցումը, ըստ որի ամկա են մարդու ինչպես բացարձակ, այնպես էլ՝ սահմանափակելի իրավունքներ: Այս տեսանկյունից հիշյալ ՅՈՒՆԿԵՍ-ի 4-րդ հոդվածն անվերապահորեն ու հստակ սահմանում է. «Ազատությունը հնարավորություն է անելու այն ամենը, *ինչն ուրիշին չի վնասում* (ընդգծումը մերն է)՝ այսպիսով, յուրաքանչյուր մարդու բնական իրավունքների իրացումն ունի միայն այն սահմանները, որոնք ապահովում են հասարակության մյուս անդամներին օգտվելու նույն իրավունքներից: Այդ սահմանները կարող են սահմանվել միայն օրենքով»: Այս հիմնադրույթը դարձել է արդի սահմանադրական իրավունքի անկյունաքարային արժեքներից մեկը:

Խոսքի ու կարծիքի ազատության սահմանափակման տեսանկյունից այս հիմնարար սկզբունքն իրացվել է հենց ՅՈՒՆԿԵՍ-ի 11-րդ հոդվածում, ինչի մասին փորձել են նշել սահմանադրական խորհուրդ դիմողները: Սակայն, ցավոք, նրանք փորձել են վերը նշված դրույթը ներկայացնել բովանդակային լուրջ ձևախեղումներով:

Անդրադառնանք դիմումի 1-ին կետի ձևակերպմանն ու փորձենք պարզել, թե որքանով ենք դրանք համահունչ ՅՈՒՆԿԵՍ-ի դրույթներին: Դիմումում ասված է. «Մտքի և կարծիքի ազատ արտահայտումը, ինչպես նշված է 1789 թվականի ՅՈՒՆԿԵՍ-ի 11-րդ հոդվածում,

¹ Stéu Боск Я. Арсенал для подстрекателей (Декларация прав человека как программа практических действий) // Исторические этюды о Французской революции. Памяти В. М. Далина (К 95-летию со дня рождения) / Пер. с фр. А. В. Чудинова. — М.: ИВИ РАН, 1998. էջ 65:

«մարդու անենաթանկ իրավունքներից մեկն է», և հենց դրա համար յուրաքանչյուրը կարող է «խոսել, գրել և հրատարակել ազատ, բացառությամբ այդ ազատության չարաշահման՝ օրենքով նախատեսված դեպքերում»: Այս ձևակերպմամբ պատճառաբանությունն է դարձել դիմողների հետագա ողջ փաստարկների հիմքն ու նաև այս մեկնաբանությամբ է այն վերարտադրվել սահմանադրական խորհրդի եզրահանգման մեջ:

Իսկ այժմ անդրադառնանք ՅՌՀակագրի 11-րդ հոդվածին. «Մտքի ու կարծիքի արտահայտման միջոցով ազատ հաղորդակցվելը հանդիսանում է մարդու անենաթանկ իրավունքներից մեկը, ուստի յուրաքանչյուր քաղաքացի կարող է ազատ խոսել, գրել ու տպագրել՝ *կրելով պատասխանատվություն այդ ազատության չարաշահման համար՝ օրենքով սահմանված կարգով*»: Այս հոդվածում ՅՌՀակագիրը, հատուկ կարևորելով խոսքի ու արտահայտվելու ազատության իրավունքը, միաժամանակ *առաջ է քաշում դրա չարաշահման համար պատասխանատվության անխուսափելիությունը*: Ի դեպ, նման պատասխանատվության հանգամանքը ՅՌՀակագրում շեշտվում է միայն 11-րդ հոդվածով ամրագրված իրավունքների առնչությամբ: Այս կարևոր հանգամանքը, եթե դիմողները փորձել են քողարկված ձևով շրջանցել, ապա սահմանադրական խորհուրդը որոշման 5-րդ կետում, մեջբերելով ՅՌՀակագրի 11-րդ հոդվածն ամբողջությամբ, ցավոք, եզրահանգումների ժամանակ արդեն բացահայտ անտեսել է խոսքի ու արտահայտվելու ազատության չարաշահման համար օրենքով անհրաժեշտ պատասխանատվություն սահմանելու հանգամանքը, *ինչը եղել էր օրենքի հեղինակների հիմնական խնդիրը*: Վեճի առարկա օրենքը նկատի է առել նաև, որ քրեական պատասխանատվություն է նախատեսվում այն անձանց համար, ովքեր «... վիճարկում են կամ վիրավորելու աստիճան նվազեցնում են մեկ կամ մի քանի ցեղասպանության եղելությունը՝ ինչպես դրանք սահմանված են Քրեական օրենսգրքի 211-1 հոդվածում և որպես այդպիսին ճանաչված են Ֆրանսիայի օրենքով»: Խոսքն այստեղ օրենքով ճանաչված եղելության մասին է, որին համարժեք վերաբերմունք է անհրաժեշտ:

Եթե սահմանադրական խորհրդի հարգարժան անդամներն առաջնորդվեին ՅՌՀակագրի էությունից բխող այս հայեցակարգով, համարժեքորեն հաշվի առնեին նաև ՅՌՀակագրի 4-րդ հոդվածի պահանջները, անխուսափելիորեն կհանգեին այլ հետևության՝ խոսքի

ազատության չարաշահման դեպքում իրավաչափ պատասխանատվություն սահմանելու անհրաժեշտության տեսանկյունից:

Օրենքի հեղինակները բացառապես առաջնորդվել են Հռչակագրի 11-րդ հոդվածի պահանջներով և օրենքով պատասխանատվություն են սահմանել խոսքի ազատության չարաշահման համար՝ նկատի ունենալով, որ ցեղասպանության՝ որպես մարդկության դեմ կատարված ծանրագույն հանցագործության օրենքով ճանաչված եղելության վիճարկումը կամ վիրավորելու աստիճան նվազեցումը դրա արդարացման ու նաև անուղղակի խրախուսման փորձ է, ինչն անհարիր է ֆրանսիական իրավունքի մշակույթի հիմնարար սկզբունքներին և մեծ վտանգ է ներկայացնում ներկա ու ապագա սերունդների համար:

Չպետք է անտեսել նաև, որ խոսքն ընդունված և իրավական ուժ ունեցող օրենքի մասին է, և որևէ դատական ատյան իրավասու չէ կամայականորեն գնահատել դրա իրավաչափությունը և իր գնահատականները դնել իր կողմից ընդունվելիք որոշման հիմքում:

Սահմանադրական խորհուրդը հանգեց տրամազօրեմ հակառակ եզրակացության՝ ստեղծելով վտանգավոր իրավական նախադեպ: Ստվեր գցվեց նաև Հռչակագրի նորմերի սահմանադրաիրավական բովանդակության վրա: Իրավունքի ցանկացած չարաշահում վտանգում է այլոց իրավունքները: Տվյալ պարագայում ոտնձգություն է կատարվել բազմամիլիոն այն մարդկանց ու նրանց սերունդների իրավունքների հանդեպ, ովքեր մարդկության դեմ կատարված ոճրագործության զոհ են դարձել: Նրանց իրավունքների հանդեպ, ովքեր այսօր չեն ցանկանում մարդատյացության զոհ դառնալ կամ հանդուրժել իրենց հանրային կյանքում այդպիսի մտայնության գոյության իրավունքը: Նման հարցերի անդրադառնալիս, երբեք չպետք է մոռանալ Հռչակագրի նախաբանի ելակետային դրույթը. «... մարդու իրավունքները հաշվի չառնելը, դրանց անտեսումը կամ արհամարհումը միակ պատճառն է հասարակական դժբախտությունների և կառավարությունների այլասերման»:

Այժմ անդրադառնանք կոնկրետ արարքը ոչ թե օրենքով, այլ բացառապես օրենքով ստեղծված դատարանի կողմից կայացված դատական ակտով հանցագործություն որակելու խնդրին: Տվյալ դեպքում սահմանափակվեց Հայոց Եղեռնի իրավական գնահատման հարցադրմանը:

Վերջին շրջանում, հատկապես, Ֆրանսիայում սահմանադրա-

կան խորհրդի որոշմամբ՝ խորհրդարանի կողմից ընդունված Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար քրեական պատասխանատվություն սահմանող օրենքը Սահմանադրությանը հակասող ճանաչելու առնչությամբ, աննախադեպ արդիականություն է ձեռք բերել Հայոց Եղեռնը դատական ակտով ճանաչելու հարցը: Մյուս կողմից, խնդրի հետազոտմամբ զբաղված գիտնականները (ոչ միայն հայրենական) պնդում են, որ Հայոց Եղեռնը ճանաչված է նաև դատական ակտերով:

Դատելով Թուրքիայի հայատյաց քաղաքականությունից, վերջինս հազիվ թե իր նախածեռնությամբ փորձեր պատասխանատվության կանչել եղեռնի կազմակերպիչներին ու իրականացնողներին, այլուամենայնիվ, անցյալ դարեսկզբին կայացած դատական գործընթացները եղել են բացառություն: Հետազոտողներից շատերը պնդում են, որ դրանում վճռորոշ դերակատարում են ունեցել առաջին համաշխարհայինում հաղթած գերտերությունները:

Այս հարցը նկատելի չարչրկվածներից է, ինչի արդյունքում էլ այն անխուսափելիորեն և արդեն օրինաչափորեն դարձել է թուրքական քարոզչության հերթական կեղծիքների թիրախ: Թուրքամետ աղբյուրների պնդմամբ Մուղրոսյան հաշտության համաձայնագրից հետո Թուրքիան հարկադրված ձեռնամուխ է եղել հիշյալ դատավարություններին, սակայն զրկված է եղել ինքնուրույն դատավարություն իրականացնելու նվազագույն հնարավորությունից և գործել է բացառապես գերտերությունների թելադրանքով¹:

Այսպիսով, մեկնակետ է ընդունվում այն գաղափարը, որ Թուրքիայի իշխանությունները դատավորություններ նախածեռնելու հիմքեր չեն ունեցել, այն պարտադրվել է արտաքին ոժերի կողմից և իրականացվել է նրանց թելադրանքով: Ինչ խոսք, սա թուրքական գաղափարախոսության համար չափազանց գրավիչ մեկնաբանություն է և, որպեսզի այն առավել հավաստի թվա, հրճաբաց շեշտվում է, որ դատավարությամբ հետազոտված բոլոր ապացույցները (հայերի բնաջնջման վերաբերյալ հրամանները, հեռագրերը, նամակները, վկաների, այդ թվում է թուրք պաշտոնյաների ցուցմունքները, ռազմական գործողությունների սխեմաները և այլ գաղտնի փաստաթղթերը) հայերի կողմից միտումնավոր ոչնչացվել են:

Ինչևէ, վերադառնանք գերտերությունների, այսպես կոչված,

¹ St' u Guenter Lewy. Revisiting the Armenian Genocid // Middle East Quarterly, Fall 2005, էջ 3-12:

ճնշումներին: Ներկայումս մատչելի փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ գերտերությունները հիմնականում պահանջել են դատավարություններ սկսել թուրքիայի կողմից գերի վերցված իրենց զինվորների նկատմամբ կատարված ոճրագործությունների համար, ինչ վերաբերում է հայերի բնաջնջմանը, ապա այն ներկայացվել է իբրև լրացուցիչ, երկրորդական հարց: Ընդ որում, Բրիտանիան սկզբնական շրջանում առաջ էր քաշում բացառապես բրիտանացի զինվորների նկատմամբ ոճրագործություններ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու հարցը, և միայն հետագայում համաձայնվեց, որպեսզի զոհե դրանից հետո քննության նյութ դառնա նաև Եղեռնի կազմակերպիչների հարցը:

Այլ կերպ ասած, հայերի զանգվածային բնաջնջման առնչությամբ ԱՄՆ-ը, Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, ցավոք, բացառապես բավարարվել են հայտնի իրադարձությունները դատապարտող հռչակագրերով: Մասնավորապես, 1915թ. մայիսի 24-ին երեք պետություններ՝ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, ընդունել են թուրքիայի կողմից «մարդկության և քաղաքակրթության դեմ» ուղղված հանցագործությունները դատապարտող հռչակագիր: Սակայն, բոլոր դեպքերում հարկ է նկատել, որ այդ հռչակագրերում նշված պետություններն աներկբայորեն ճանաչել են նշված իրադարձությունները, որպես թուրքիայի կողմից էթնիկական հատկանիշով պայմանավորված զանգվածային բնաջնջումներ:

Հաճախ են հարցեր ծագում այն կապակցությամբ, թե որքանով են հետևողական եղել գերտերությունները՝ հիշյալ դատավարությունն իրականացնելու հարցում: Հետևողականություն իրականում եղել է, սակայն այն ունեցել է բոլորովին այլ ողղվածություն: Նախ, մինչև դատավարությունն սկսելը, ավելին մինչև մինչդատական վարույթ նախածեռնելը, նույն այդ *գերտերությունների անմիջական աջակցությամբ թուրքիան անարգել լքել են բոլոր այն բարձրաստիճան պաշտոնյաները, որոնց նկատմամբ եղել է մասնապատիժ սահմանելու հնարավոր վտանգ:* Պատահական չէ, որ հենց գերմանական սուզանավով հապճեպ փախուստի են դիմել Եղեռնի գաղափարախոսներն ու անմիջական կազմակերպիչները՝ *Թալաթը, Էնվերը, Ջեմալը և Նազիմը:* Դրանից հետո այս անձանց սիրահոժար իրենց հետ համագործակցելու տարաբնույթ առաջարկություններ են անում արդեն խորհրդային Ռուսաստանն ու նյուսները: Ուրիշ բան, որ այդ գործիչները հետագայում խորհրդային Ռուսաստանի իշխանություն-

ներին ևս խաբում են և փորձում վստահությունը չարաշահելու միջոցով իրականացնել միայն իրենց հոգեհարազարտ՝ պանթուրքիզմի գաղափարները:

Ընդ որում, նշված պետությունների հատուկ ծառայությունները հոգացել են, որպեսզի վերջիններս հնարավորինս պաշտպանված լինեն, անգամ ապահովել են կեղծ անձնագրերով ու անուններով: Օրինակ, էնվերը Գերմանիայում հանդես է եկել Ալի-Բեյ կեղծանվամբ: Այսինքն՝ գերտերությունների կողմից ի՞նչ թելադրանքի մասին կարող է խոսք լինել, երբ հիմնական ռճրագործներին պատժից զերծ պահելու և համագործակցելու նախաձեռնությունը հենց իրենց է պատկանում:

Հանրահայտ է, որ մահապատժի դատապարտված բոլոր թուրք պաշտոնյաները հետախուզման մեջ գտնված վիճակում հետագայում, այնուամենայնիվ, հայտնաբերվել ու սպանվել են, սակայն դա արդեն բոլորովին այլ նյութ է և որևէ առնչություն չունի «թուրքական արդարադատության» հետ:

Վերադառնալով հիմնական հարցին, ի՞նչ նկատառումներով ու չափանիշներով են որոշ հետազոտողների կողմից Թուրքիայի ռազմական տրիբունալի կողմից 1919-1920թթ. իրականացված դատավարությունները գնահատվում իբրև մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին հակասող:

Այդ գնահատականի, թերևս, ամենահետևողական հեղինակը Լևի Գյունտերն է, սակայն վերջինիս աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք պարզապես թուրքական պաշտոնական գաղափարախոսության ու դրա «տեսաբանների» բառացի կրկնություններն են, որոնք համակարգված իրենց արտացոլումն են ստացել թուրք պատմաբաններ Սինասի Օրելի և Սուրեյ Յուկայի աշխատություններում, չունեն որևէ փաստական հիմք և համոզիչ չեն նաև հեղինակի մասնագիտական ունակությունների տեսանկյունից: Վերջին հանգամանքի վրա իր ուշադրությունն է բևեռել նաև Հայ մեծագույն պատմաբան ակադեմիկոս Վահագն Դադրյանը: Մասնավորապես, վերջինս ստույգ փաստերով ոչ միայն հիմնավորել է Լևի Գյունտերի դիրքորոշումների սնանկությունն ու միտվածությունը, այլև բացահայտել է այն, որ այդ սուբյեկտը պարզապես բավարար չափով չի տիրապետում թուրքերենին, հատկապես, օսմանյան թուրքերենին, թեպետ հղումներ է կատարել այդ լեզվով աշխատությունների վրա: Հայտնվել է այն կարծիքը, որ Լևին ոչ միայն չի տիրապե-

տում լեզվին, այլև միտումնավոր խեղաթյուրում է անգամ թուրքական աղբյուրները, փորձելով էլ ավելի համոզիչ դարձնել իր սին գաղափարները¹: Ընդ որում, Վ.Դադրյանի գնհատականների առնչությամբ միանգամայն իրավացիորեն իրենց համաձայնությունն են հայտնել միջազգային քաղաքակազիտության բազմաթիվ ներկայացուցիչներ², հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված գիտնականը ծնվել և մեծացել է Օսմանյան թուրքիայում, այնուհետև տևական ժամանակով դասավանդել է աշխարհի լավագույն ու բարձր վարկանիշ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Այժմ անդրադառնանք զուտ իրավական հարցադրումներին: Այդ ակնհայտ ուղղորդված հեղինակին «մտահոգել է» այն, որ նախաքննության ընթացքում կասկածյալները զրկված են եղել պաշտպանների օգնությունից: Մինչդեռ, դատավարության արձանագրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ կասկածյալներն ամեն օր ազատ շփումներ են ունեցել միմյանց հետ (հատկապես, զբոսանքի ժամերին) և ունեցել են պաշտպանական միասնական տակտիկա մշակելու լավագույն հնարավորությունը, բացի այդ, պարբերաբար օգտվել են կարճատև արձակուրդներից, լքելով մեկուսարանները, ինչն ազատ հնարավորություն է տվել տևական ժամանակով շփվելու իրենց պաշտպանների հետ:

Նույն այդ հեղինակը, ցիտելով Ստամբուլում Բրիտանիայի գերագույն հանձնակատար Դո Ռոբեկայի խոսքերը, փորձել է պնդել, որ անգամ «պատվիրատու» պետություններն են դժգոհել դատավարությունից: Իրականում վերջինս դժգոհություններ հայտնել է, սակայն Լևին «մոռացել է» հստակեցնել, որ այդ դժգոհությունը պայմանավորված է եղել կասկածյալների նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից իրականացվող բացահայտ հովանավորչությամբ: Օրինակ, թուրքիային առաջարկվել է հաշվի առնել դատավարության միջազգային բնույթը և դատարանի կազմում մասնակից

¹ Հիշյալ հարցադրումներն առավել հանգամանորեն լուսաբանված են հեղինակի հետևյալ աշխատություններում՝ *Vahakn N. Dadrian. The Turkish Military Tribunal's Prosecution of the Aethors of the Armenian Genocide: Four Major Court-Martial Series // Holocaust and Genocide. – Oxford University Press, 1977. – Vol. 11. – p. 28-59. Vahakn N. Dadrian. Armenian Genocide. court-martial of perpetrators //Israel W. Charny, Encyclopedia of genocide. – Santa Barbara, California: ABC-CLIO, 1999. – 718 p.,*

² Տե՛ս David B. MacDonald. Նշված աշխատությունը:

դարձնել այլ պետությունների ներկայացուցիչների, սակայն այդ և նմանաբնույթ բոլոր այլ առաջարկությունները կտրականապես մերժվել են, ինչն էլ իրավաչափորեն դժգոհության տեղիք է տվել: Այսպիսով, Լևին փորձել է պարզունակ խորամանկություն բանեցնել և որպես իր պնդումների հիմնավորում՝ հատվածաբար հղումներ կատարել այլ, արդեն «հավաստի» աղբյուրների վրա:

Ի դեպ, տեսնելով ակնհայտ հովանավորչության դրսևորումները, անգլիական հրամանատարությունը, հարկադրված, երիտթուրքերի առաջնորդների և նախարարների գործով 1919թ. ապրիլի 27-ին սկսված դատավարությամբ անցնող թվով 77 կալանավորվածների տեղափոխել է Մալթա, որտեղ դատավարությունը շարունակվել է մինչև 1919թ. հունիսի 26-ը (այս առանցքային գործով դատավճիռն արձակվել է 1919թ. հուլիսի 5-ին):

Տվյալ դեպքում նույն դատողություններն այլազգի հեղինակների շուրթերից հնչեցնելը պարզապես հետապնդում է դրանց արտաքինապես առավել հավաստիություն հաղորդելու պատրանք: Այս կտրվածքով այնքան էլ համամիտ չեմ այն հեղինակների հետ, որոնք գտնում են, թե իբր հրեա հետազոտողները կանխակալ դիրքորոշում ունեն և ամեն գնով փորձում են Յոլթոստի նշանակությունը չնսեմացնել Հայոց Եղեռնի ճանաչման փաստով¹:

Մյուս կողմից այդ դատավարություններում, հասկանալի պատճառներով, դույզն իսկ որևէ ողջամիտ միջոց չի ձեռնարկվել տուժողների (բացառությամբ՝ Անտանտայի պետություններից գերեվարված զինվորների) շահերի պաշտպանության ուղղությամբ: Բնորոշ է այն, որ դատավարությանը մասնակցած սակավաթիվ հայ փաստաբանների բոլոր միջնորդությունները մերժվել են²:

Հավելենք, որ առ այսօր այդ դատավարությունների արձանագրություններն ու մեղադրական ակտերը հասանալի չեն լայն հետազոտողներին, դրանց որոշ հատվածների մասին կարելի է դատողություններ անել՝ միայն հիմք ընդունելով թուրք հետազոտողների կամայական որոշ հղումները:

Բոլոր այն անձինք, ովքեր այս կամ այն պատճառով չեն հասցրել փախուստի դիմել, ստացել են ցեղասպանության համար ակն-

¹ Տե՛ս David B. MacDonald. Նշված աշխատությունը:

² Տե՛ս Taner Akçam. From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide. – Zed Books Ltd, 2004, էջ 270:

հայտ անհամաչափ, խորհրդանշական պատիժներ: Խիստ սահմանափակ դեպքերում է սահմանվել 10, 15 տարվա ազատազրկում: Այսպես, օրինակ, «Երիտթուրքերի» կուսակցության Խարբերդի տեղական կոմիտեի քարտուղար Ռեսնելի Նազիմը՝ մի քանի տասնյակի հասնող բնակչության սպանությունը, գույքի զանգվածային հափշտակությունը և բռնաբարությունները կազմակերպելու համար դատապարտվել է 15 տարվա տաժանակիր աշխատանքի: Ընդ որում, իմ կողմից դեռևս ոչ բավարար ծավալով կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ պատժվածները, հիմնականում, «չեն հասցրել» կրել իրենց պատիժները՝ ազատ արձակվելով անգամ մինչև 1923թ. համաներման ակտը:

Այնուամենայնիվ, ստացվում է, որ կան դատավճիռներ, սակայն չեն պահպանվել դրանց հիմքում դրված արխիվային փաստաթղթերը: Ընդ որում, թուրքական կողմն ու դրանց համակիրները պնդում են, որ դրանց ոչնչացման մեջ մեղավոր են հենց հայերը: Որևէ լուրջ հետազոտող ի վիճակի չէ անգամ ենթադրել, որ այդ արխիվային փաստաթղթերը ոչնչացրել են հայերը, դա այնքան անհեթեթ դատողություն է, որին չարժեն անդրադառնալ: Վերջին հաշվով, քրեական գործերում առկա պետական խիստ պահպանության ներքո գտնվող փաստաթղթերը, մեծագույն ցանկության դեպքում, չէին կարող հափշտակվել ու ոչնչացվել մասնավոր անձանց կողմից, մանավանդ, ցեղասպանությունից հետո Թուրքիայում ստեղծված իրավիճակում:

Ինչ վերաբերում է, արխիվային փաստաթղթերին, ապա ներկայացնենք որոշ նկատառումներ: Նախ, դրանց հիմնական ու առավել առանցքային նշանակություն ունեցող հատվածի կորուստը (ես սա պայմանական են ասում, որովհետև դեռևս վստահ չեմ, որ դրանք գոյություն չունեն) պետք է որ սթափեցներ մեր այն ազգային որոշ գործիչներին, որոնք մի պահ հրապուրվել ու պատմական փաստաթղթերը համատեղ ուսումնասիրելու համար հանձնաժողովներ ստեղծելու քայլեր էին փորձում ձեռնարկել:

Մյուս կողմից, դատավճիռների հիմքում դրված փաստաթղթերի գոյության փաստը ևս չի կարելի ժխտել. վերջին հաշվով, դատավարության մասնակիցները հանգամանորեն հետազոտել են կոնկրետ փաստաթղթեր, ինչի առնչությամբ կազմվել են արձանագրություններ, իսկ հետագայում դրանց բացակայությունը չի կարող որևէ կերպ խոցելի դարձնել բուն դատավճիռների իրավաչափությունը: Ի՞նչ է

ստացվում, թուրքական կողմը խայծ է նետում, հիմքում ունենալով իբր թե դատարանների կողմից հետազոտված պատմական փաստաթղթերի կորուստը, մասնավորապես հայերի կողմից իբր թե դրանց հափշտակությունն ու ոչնչացումը: Մենք արդեն անդրադարձանք այդ վարկածի սնանկությանը, սակայն առավել անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այդ վարկածը ոչ միայն չպետք է քննարկման հատուկ նյութ լինի՝ իր ակնհայտ անհեթեթության պատճառով, այլև՝ գլխավորապես այն պատճառով, որ որևէ իրավական նշանակություն ու արժեք չունի և չպետք է «կուլ տալ» հիշյալ խայծը: Վերջին հաշվով, խոսքը դատական ատյաններում սահմանված կարգով հետազոտված ապացույցների մասին է, որոնց գերակշիռ մասը, այդ թվում դատավարությունների արձանագրությունները հանգամանորեն արտացոլվել են թուրքական մամուլում: Իսկ, եթե դրանք հետագայում կորսվել են, ապա դա զուտ տեխնիկական արժեք ունեցող հարց է:

Մի կարևոր հարցադրում ևս. եթե թուրքական կողմը, արդեն երկու տարի անց, եկել է այն համոզման, որ դատավարություններում քննարկման նյութ դարձած փաստաթղթերը, վկաների ու կասկածյալների ցուցմունքները և այլ ապացույցները բավարար չափով իբր հավատ չեն ներշնչում, ապա կարող էր անդրադառնալ կայացած դատական ակտերին և նախաձեռնել դրանց բեկանման գործընթաց, մինչդեռ, ինչպես արդեն նկատեցինք, 1923թ. ընդունվել է համաներում հայտարարելու մասին օրենք, որով բնավ չեն հերքվել դատական ակտերով արձանագրված փաստերը, այլ պարզապես, հաշվի առնելով «միջազգային բարենպաստ իրավիճակը» հապճեպ նախաձեռնել են պատժված անձանց սոսկ պատժի կրումից ազատելու գործընթաց: Հավելենք նաև, որ մահապատժի դատապարտված բոլոր անձինք, որոնք հետագայում հերոսացվել են, որոնք անգամ հանրակրթական դասագրքերում են ներկայացվում, որպես Թուրքիայի ազատության ու անկախության համար զոհված նահատակներ, դատական որևէ ակտով չեն արդարացվել¹:

Վերջապես, փաստաթղթերի շրջանակը չի սահմանափակվում միայն դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով: Իհարկե, տրամաբանական կլիներ, որ բոլոր վերաբերելի ու թույ-

լատրելի ապացույցները պահանջվեին ու հետազոտվեին 1919-1920թթ. դատավարությունների ընթացքում, սակայն բարեբախտաբար՝ դրանց մի հատվածը ոչ միայն չի դարձել դատաքննության առարկա, այլև, հավանաբար, հենց այդ պատճառով՝ պահպանվել է: Բայց այս հարցն առայժմ առկախենք: Ուղղակի նկատենք, որ ապացույցները ոչ լիարժեք ուսումնասիրելը ևս վկայում է դատական գործընթացներում մեղադրյալների հովանավորչության և ակնհայտ դեպքերն աղավաղելու փաստերի մասին:

Բոլոր դեպքերում, առկա են միանգամայն օրինական ուժ ունեցող դատավճիռներ, անդրադառնանք այն հարցին, թե ինչպե՞ս է վերաբերվում դրանց թուրքական կողմը և բոլոր այն պետությունների օրենսդիր իշխանության մարմինները, որոնք դեռևս մերժում են Չայոց Ցեղասպանության փաստի ճանաչումը:

Նախ, վերջին քաղաքական զարգացումները մեկ անգամ ևս եկան հաստատելու այն, որ թուրքական կողմը վերաբերվում է այնպես, ինչպես Ալիև կրտսերը վերաբերվեց ռամիլ սաֆարովի կապակցությամբ Յունգարիայի դատավճռի հետ. միանշանակ հերոսացվել ու շարունակում են հերոսացվել իրենց ազգային դատական ատյանների կողմից մահապատժի դատապարտված անձինք, հիմքում ունենալով այնպիսի ցինիկ ու սնանկ պատճառաբանություններ, որպիսիք մեր օրերում պաշտպանվում են իրենց անաչառ հետազոտող հռչակած լեհիների, պրոխանովների, գեյդար ջեմալների կողմից: Ըստ հավաստի աղբյուրների, խորհրդային իշխանության փլուզումից հետո, Էմվերի աճյունը 1996թ. փոխանցվել է Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելիին: Այդ ոճրագործների անուններով Թուրքիայում կարելի է հանդիպել բնակավայրերի, ուսումնական հաստատությունների և այլն: Թուրքական կողմը պարզապես ձգտում է անտեսել իր ազգային դատական ատյանների կողմից շուրջ 100 տարի առաջ կայացված դատական ակտերը:

Ինչ վերաբերում է արտասահմանյան երկրների խորհրդարաններին, ապա, ցավոք, դեռ այդ հարցում չի ձևավորվել դատական ակտերով ղեկավարվելու անհրաժեշտ փորձ ու պրակտիկա՝ մեր կողմից սույն հոդվածի սկզբնամասում բերված պատճառաբանու-

¹ Տե՛ս Եարցերոս Կ.Գ., Նույն աշխատությունը, էջ 89:

յուններով հանդերձ: Անգամ Հայոց Ցեղասպանությունը ճանաչած բազմաթիվ պետություններ հիմնվել են միայն պատմական փաստերի վրա, մինչդեռ՝ իրավական տեսանկյունից արժեք առաջին հերթին հիմքում դնել դատական ակտերը:

Կարևոր է նաև այն հարցադրումը, թե ինչ չափով և ինչ իրավական եզրույթներով են նշված դատական ակտերն անդրադարձել Հայոց եղեռնի փաստին, ինչպե՞ս են «բացատրել» զանգվածային սպանությունների պատճառները և այլն:

Եթե անցյալ դարի սկզբներին միջազգային իրավական փաստաթղթերով ցեղասպանությունը ճանաչված լիներ, որպես մարդկության դեմ ուղղված ծանր հանցագործություն՝ դրանից բխող բոլոր քաղաքական-իրավական հետևանքներով հանդերձ, ապա Թուրքիան ոչ մի պայմանով այդպիսի «սխալ» չէր գործի և չէր նախաձեռնի հայտնի դատավարությունները: Մյուս կողմից, դրան նպաստել է Թուրքիայի ներքաղաքական բարդ իրավիճակը. մասնավորապես նոր ձևավորված կառավարությունը դրանով փորձել է էլ ավելի ամրապնդվել իր դիրքերում՝ միաժամանակ արհեստականորեն ձեռք բերել արտաքին աշխարհում անհրաժեշտ հեղինակություն և միջազգային հանրությունում հնարավորինս արագ ինտեգրվելու հիմքեր:

Ինչ վերաբերում է դատավճիռներում արտացոլված իրավական գնահատականներին, ապա դրանք նույնությամբ համընկնում են ցեղասպանության հանցակազմին, պարզապես, հասկանալի պատճառներով, այդ եզրույթը չի օգտագործվել: Այսպես, արդեն 1919թ. մայիսի 3-ին գլխավոր դատախազը դատարան է ներկայացրել փաստեր, որոնք վկայել են այն մասին, որ հայ բնակչության զանգվածային սպանությունները, հիմնականում իրականացվել են խիստ կազմակերպված եղանակներով: Ավելին, դատարանում միանշանակ հերքվել է պաշտպանական կողմի այն դիրքորոշումը, թե իբր հայ բնակչության, այսպես կոչված, տեղափոխությունները բխել են ռազմական գործողությունների անհրաժեշտությունից: Ապացուցված է համարվել այն, որ դրանք եղել են բռնի տեղահանումներ և ևս համարվել են կազմակերպված եղանակով հայ մարդկանց ոչնչացման միջոց, իսկ եղանակն ինքնին դիտվել է մի կողմից, որպես հնարավոր դիմադրությունը բացառելու, մյուս կողմից՝ միջազգային հանրությանը շփոթության մեջ զցելու «լավագույն» հնարք:

Ընդ որում, բացառապես էթնիկական հատկանիշով անձանց զանգվածային սպանությունների իրական ծրագրերը թաքցնելու նպատակով, ըստ վերը նշված դատական ակտերի, ինչպես նաև մեղադրական դատավճիռների, պարբերաբար տրվել են «գաղտնի» գրավոր ու բանավոր հրահանգներ: Բնականաբար, բոլոր գրավոր փաստաթղթերը ենթակա են եղել ոչնչացման, սակայն դրանց մի մասը պահպանվել ու հետագայում հետազոտվել են դատարանում:

Ամփոփելով նշված դատավճիռներում արտացոլված իրավական գնահատականները, կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական եզրահանգումները՝

ա) էթնիկ հատկանիշով պայմանավորված հայազգի անձանց զանգվածային սպանություններն ու բռնի տեղահանումները կազմակերպվել և իրականացվել են իրավասու իշխանությունների կողմից, դա չի եղել սոսկ առանձին կուսակցության կամ առանձին պաշտոնյաների հատվածական նախաձեռնություն,

բ) զանգվածային սպանություններն ու բռնի տեղահանումներն իրականացվել են «գաղտնագրված» հրամանների, հրահանգների, ծրագրերի ու բանավոր կարգադրությունների հիման վրա, որպեսզի չբացահայտվի դրանց իրական նպատակն ու ուղղվածությունը,

գ) նշված հանցագործության կատարմամբ երիտթուրքերը փորձել են մեկընդմիջտ «լուծել» հայկական հարցը, որը վերջիններիս գնահատմամբ մեծ վտանգ է ներկայացրել իրենց պետական անվտանգությանը,

դ) բռնի տեղահանումները, որոնց հետևանքով մեծաքանակ անձինք մատնվել են սովամահության ու այլ անմարդկային տանջանքների, ոչ մի առնչություն չեն ունեցել ռազմական անհրաժեշտության հետ (ի դեպ, ռազմական անհրաժեշտության վարկածը ներկայումս բավականին հաճախ են թմբկահարում թուրքական քարոզիչները), ընդ որում, տեղահանվել են անգամ այնպիսի բնակավայրերից, որոնք որևէ առնչություն չեն ունեցել ռազմական իրադարձությունների հետ և որոնց բնակչությունը դրսևորել է ակնհայտ լոյալ վարքագիծ,

ե) կատարված հանցագործությունները ոչ միայն ոտնձգում են քրեական օրենսդրությունը և, այսպես կոչված, իսլամի «պատվիրանները», այլև ուղղված են «մարդկության ու քաղաքակրթության»

դեմ և այլն:

Այսպիսով, բազմաթիվ երկրների խորհրդարաններ, իսկ Ֆրանսիայի պարագայում՝ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինը՝ Սահմանադրական խորհուրդը, իրավաչափ չեն համարում օրենսդիր մարմնի կողմից Հայոց Եղեռնը ճանաչելը, առավել ևս, այն ժխտելու համար քրեական պատասխանատվություն սահմանելը, պատճառաբանելով, որ այդպիսի քաղաքական որոշման հիմքում պետք է լինի համապատասխան դատական ակտ:

Ավելին, ինչպես արդեն նկատեցինք, թուրքական կողմն արել է ամեն ինչ, որպեսզի վերը նշված դատավճիռները լայն քննարկման նյութ չդառնան, պարզապես չհայտնվեն տեսադաշտում, փորձելով միջազգային հանրության ուշադրությունից հեռու պահել այն իրողությունը, որ հենց իր ազգային դատական ատյաններն են անցյալ դարասկզբին դատապարտել հայերի ոճրագործությունը: Եվ բավական է, որ որևէ հետազոտող փորձի այդ թեման արդիականացնել, անմիջապես գործի է դրվում Լևիի նման հերքողներին կանաչ ճանապարհի հարթելու մեթոդաբանությունը:

Սակայն, եթե զուտ գիտական չափանիշներով հիշյալ դատավճիռները դեռ կարող են հետազոտման նյութ լինել, ապա նույնը չի կարելի ասել իշխանության այս կամ այն ճյուղը ներկայացնող մարմնի գործունեության դեպքում: Ցավոք, նշված զգուշավորությունը մեծամասամբ պայմանավորված է արտաքին քաղաքականության գործոններով, իսկ մասամբ էլ՝ ոչ բավարար իրազեկվածությամբ, ինչին արդեն անդրադարձանք: Վերջին հաշվով, Հայոց Եղեռնի փաստն արձանագրվել է նաև Ռուսնդայի ցեղասպանության գործով միջազգային դատարանի 2012թ. դատավճռով (այս գործով դատարանը կայացրել է մի շարք դատավճիռներ), մասնավորապես, այս դատական ակտը, անդրադառնալով ցեղասպանության, այդ թվում՝ Ռուսնդայում արձանագրված նույնաբնույթ դեպքերի պատճառներին, ևս փաստել է, որ միջազգային հանրությունը համարժեք հետևություններ չի արել Հայոց Եղեռնի փաստից, ինչն էլ նպաստել է այդպիսի երևույթների տարածվածությանը:

Այսպիսով, Հայոց Եղեռնի միջազգային ճանաչման հիմնախնդրի և այդ կապակցությամբ խոսքի ու արտահայտման ազատության իբր թե անհիմն սահմանափակման հարցադրումներին սպառնիչ պատաս-

խաններ տալու նկատառումով, նպատակահարմար ենք համարում, որպես ելակետ ընդունել հետևյալ եզրահանգումները՝

ա) Հայոց Եղեռնը, ըստ էության, հիմնավորվել ու ճանաչվել է թուրքական դատական ատյանների կողմից 1919-1920թթ. իրականացված դատավարությունների արդյունքով կայացված դատավճիռներով: Վերջիններս օրինական ուժի մեջ են մտել և երբևէ չեն բեկանվել,

բ) Հայոց Եղեռնի իրավական գնահատականը տրված է նաև Ռուսաստանի ցեղասպանության գործով միջազգային դատարանի 2012թ. դատավճռով,

գ) իրավական որևէ արժեք չունի այն փաստարկը, որ իբր դատաքննության փուլում հետազոտված բոլոր ապացույցները հետագայում հափշտակվել ու ոչնչացվել են հայերի կողմից, քանզի դրանք արդեն իսկ հետազոտվել և իրավական գնահատման նյութ են դարձել իրավասու դատական ատյանների կողմից,

դ) դատական ակտերով Հայոց Եղեռնի ճանաչման փաստը հարկ է դնել այդ ցեղասպանության միջազգային ճանաչման հայրենական դիվանագիտության հիմքում,

ե) նպատակահարմար է նախաձեռնել դատական ակտերից բխող Թուրքիայի պետության պատասխանատվության հարցը՝ նախապես հանգամանորեն մշակելով բոլոր հնարավոր տարբերակներն ու իրավական հետևանքները: Վերջին եզրահանգման առնչությամբ, հաշվի առնելով Երևանի Պետական համալսարանի գիտական ներուժը, նպատակահարմար է համարվում նախաձեռնել գիտական կենտրոն, որը կոչված կլինի սեղմ ժամկետում համակողմանիորեն հետազոտելու Հայոց Եղեռնի իրավական հիմքերին և պատասխանատվության նախապայմաններին առնչվող հարցադրումները և կփորձի հանրության դատին ներկայացնել հիշյալ ոլորտում պետական քաղաքականության ամբողջական հայեցակարգ:

Ամփոփելով Հայոց Եղեռնի միջազգային ճանաչման իրավական ասպեկտները, նպատակահարմար ենք գտնում, որ այդ առնչությամբ նախորդ դարակզբի դատավարությունները լայն շրջանառության մեջ դնելու և հայրենական դիվանագիտության համար, որպես կարևոր խաղաքարտ օգտագործելու անհրաժեշտությունն ունի անհատ քաղաքացիների տարրական գույքային իրավունքները պատշ-

պանելու տեսանկյունից նաև զուտ գործնական նշանակություն: Խնդիրն այն է, որ միջազգային ապահովագրական ընկերությունները, որոնք մոտ 5-6 տարի առաջ նախաձեռնել էին Թուրքիայում Հայոց Եղեռնի ընթացքում զոհված, ինչպես նաև հարկադրաբար գաղթած ազգությամբ հայ անձանց ապահովագրական վճարները՝ նրանց ժառանգներին հատկացնելու գործընթացը, ակնհայտ անհիմն պատճառաբանություններով, սոսկ թուրքական լրբինգի ազդեցությամբ կտրուկ դադարեցրել են վճարումները: Ընդ որում, Միացյալ Նահանգներում «Աքսա» ապահովագրական ընկերության կողմից վճարումները դադարեցվել են այդ երկրի դատական ատյանների անհիմն միջամտությամբ: Այսինքն, կարող ենք արձանագրել, որ անգամ դատական ատյաններում է փորձ արվում անտեսել մեկ այլ երկրի դատական ատյանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը:

Gevorg Danielyan

*Advisor to the Constitutional Court of the RA, Head of the Board
of the Center of Constitutional Law, Doctor of Legal Sciences,
Professor*

MODERN ASPECTS OF THE LEGAL BASES FOR RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE

This article is devoted to comprehensive research of the legal basis for the international recognition of the Armenian Genocide. Particularly, the judgments of the military tribunal, as well as of general jurisdiction courts dated 1919-1920 concerning the genocide events planned and carried out by the Turkish authorities in 1915 are systematically studied and presented, as well as their legal value and importance for the international recognition of the Armenian Genocide is revealed.

The conclusion that the above-mentioned judicial acts, as well as the trials themselves are substantially in accordance with the principles and standards of international law and can be a legal base for the international recognition of the Armenian Genocide, as well as for establishing criminal responsibility for denying these events, is substantiated in the Article.

At the same time, the bankruptcy of the Turkish ideology concerning the mentioned judgments is revealed. In particular, it is emphasized that they are quite enforceable judicial acts able to lead to legal consequences, they haven't been revoked by any judicial instance, were accepted and applied also by Turkish judicial instances acting in that period. Moreover, the Amnesty Act of 1923 proves that the Turkish authorities didn't challenge the judicial acts, but only tried to heroize their villainous compatriots by using legal landslides.